ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«14» 11 2025 թ. ք. Երևան Թիվ 256-Լ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՔՆՆՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԱՌԳՐԱՎՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԲԱՆԿՈՒՄ ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԱՏԵՂԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներով քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով իրեղեն ապացույց ճանաչված առարկաների, արգելադրված և (կամ) առգրավված գույքի պատշաճ պահպանության անհրաժեշտությունը և ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներով իրեղեն ապացույց ճանաչված առարկաները, արգելադրված և (կամ) առգրավված գույքը բանկում պահատվության հանձնելու և պահատեղիից օգտվելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Սույն հրամանն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, ՀՀ քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
2025թ. նոյեմբերի 14 -ի թիվ 256 -Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՔՆՆՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԱՌԳՐԱՎՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԲԱՆԿՈՒՄ ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԱՏԵՂԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներով իրեղեն ապացույց ճանաչված առարկաները, արգելադրված և (կամ) առգրավված գույքը (այսուհետ՝ նաև գույք) բանկում պահատվության հանձնելու և պահատեղիից օգտվելու հետ կապված հարաբերությունները:

2. Գույքն (դրամ, արտարժույթ, արժեթղթեր, թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր և այլն) ըստ անհրաժեշտության կարող է պահպանության հանձնվել ՀՀ-ում գործող բանկերում՝ սույն կարգով նախատեսված ընթացակարգով: Նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը (այսուհետ՝ քննիչ) քննչական համապատասխան հիմնական մասնագիտական ստորաբաժանման պետին (այսուհետ՝ ստորաբաժանման պետ) զեկուցագիր է ներկայացնում համապատասխան գույքը պահատվության հանձնելու անհրաժեշտության մասին՝ նշելով քրեական վարույթի համարը և պահատվության ենթակա առարկաների ցանկը:

3. Ստորաբաժանման պետը զեկուցագիրն ուղեկցական գրությամբ ներկայացնում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին և միաժամանակ՝ ըստ համակարգման ոլորտի՝ իրավասու անձին (պարտականությունները կատարողին):

4. Իրավասու անձինք են համարվում՝

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով՝ գլխավոր վարչության պետի տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով՝ գլխավոր վարչության պետը կամ նրա տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով՝ գլխավոր վարչության պետը կամ նրա տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով՝ գլխավոր վարչության պետը կամ նրա տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով՝ գլխավոր վարչության պետի տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի մարզային քննչական ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով՝ ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետը կամ նրա տեղակալը:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներով՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետը կամ նրա տեղակալը:

5. Կոմիտեի գլխավոր քարտուղարը, ուսումնասիրելով ներկայացված զեկուցագիրը, ողջամիտ ժամկետում քննարկում է գույքը բանկում պահատվության հանձնելու անհրաժեշտությունը և հնարավորությունը, միջոցներ ձեռնարկում դրանք բանկի պահատվությանը հանձնելու ուղղությամբ:

6. Բանկում պահատեղիի վարձակալության պայմանագիր կնքելուց հետո, ինչպես նաև այն դեպքերում, երբ արդեն իսկ բանկի հետ կնքված նախորդ պայմանագրերի հիման վրա առկա են լինում վարձակալված պահատեղիներ, ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարը կազմակերպում է համապատասխան իրավասու անձին բանկի պահատեղին օգտագործելու լիազորագրի, ինչպես նաև պահատեղիի բանալու տրամադրումը: Յուրաքանչյուր լիազորագիր տրվում է բանկի հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետով: Ըստ անհրաժեշտության կարող է տրվել ավելի երկար կամ ավելի կարճ ժամկետով լիազորագիր: Լիազորագրում նշվում են նաև իրավասու անձի ծառայողական վկայականի համարը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի կամ նույնականացնող քարտի տվյալները:

7. Իրավասու անձը բանալին առաջին անգամ ստանում է Կոմիտեի առաջին բաժնի կողմից՝ լիազորագրի հիման վրա: Բանալին հանձնելու և հետագայում այն վերադարձնելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում նշվում է պահատեղիի (բանալու) համարը, քրեական վարույթի (վարույթների) համարը, արձանագրությունը կազմելու օրը և ժամը: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, որոնցից մեկը տրամադրվում է իրավասու անձին:

8. Դեռևս չհանձնված կամ դատարկ պահատեղիների բանալիները, կնքված պայմանագրերի (դրանց մաս կազմող փաստաթղթերի), սույն Կարգին վերաբերելի զեկուցագրերի, արձանագրությունների, լիազորագրերի պատճենների և գրությունների

պահպանությունը Կոմիտեում իրականացվում է Կոմիտեի առաջին բաժնի կողմից՝ մետաղյա պահարանում:

9. Բանկում առկա՝ Կոմիտեի կողմից վարձակալված պահատեղիների պայմանագրերի վերաբերյալ վարվում է համապատասխան մատյան, որի հաշվառումն իրականացվում է Կոմիտեի առաջին բաժնի կողմից՝ Ձև 2-ին համապատասխան:

10. Իրավասու անձը Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից ստորագրված լիազորագրի հիման վրա ստանում է լիազորագրում նշված պահատեղիի բանալին: Բանալին վերցնելու և հանձնելու մասին ստորագրում է Ձև 1 մատյանում: Ներկայացված լիազորագիրը պատճենահանվում է:

11. Իրավասու անձը մուտք է գործում բանկ՝ միայն լիազորագրի, անձը հաստատող փաստաթղթի, ծառայողական վկայականի և համապատասխան բանալու առկայության դեպքում՝ ստորաբաժանման պետի և քննիչի ուղեկցությամբ:

12. Իրավասու անձը վարում է առանձին մատյան, որում նշվում է պահատեղիի համարը, համապատասխան ստորաբաժանման (ստորաբաժանումների) անվանումը, քրեական վարույթի (վարույթների) համարը և ըստ վարույթների՝ առարկայի թվարկումը (չափ, քանակ, առկայության դեպքում արժեք, այլ անհրաժեշտ հատկանիշներ):

13. Իրավասու անձը պահատեղիից օգտվելուց հետո բանալին պահում է իր մոտ՝ մետաղյա պահարանում: Իրավասու անձի՝ պաշտոնից ազատվելու, այլ պաշտոնում նշանակվելու, արձակուրդ մեկնելու, գործուղվելու, ժամանակավոր անաշխատունակության դեպքերում բանալին և մատյանը հանձնվում է սույն Կարգում նախատեսված համապատասխանաբար մեկ այլ իրավասու անձին, իսկ Կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության և զինվորական քննչական գլխավոր վարչության դեպքերում՝ գլխավոր վարչության պետերին: Բանալին ու մատյանը հանձնելու և հետ վերադարձնելու յուրաքանչյուր դեպքում կազմվում է արձանագրություն, որն ուղարկվում է ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

14. Գույքը պահատեղիում տեղավորելու կամ այնտեղից հանելու (այդ թվում նաև՝ մեկը կամ մի քանիսը) յուրաքանչյուր դեպքում քննիչը դրա մասին կազմում է արձանագրություն՝ նշելով առարկայի տեսակը, պահատեղիի համարը, գտնվելու վայրը, տեղավորման կամ հանելու օրը, ժամը և որպեն, անհրաժեշտության դեպքում՝ այլ տվյալներ:

15. Քրեական վարույթի շրջանակներում պահատեղիում պահվող առարկաները հանելու կամ դրանք կրկին պահատեղիում դնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում քննիչը զեկուցագիր է ներկայացնում ստորաբաժանման պետին, ով նշված զեկուցագիրն ուղարկում է իրավասու անձին և ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

16. Քրեական վարույթի շրջանակներում պահատեղիի օգտագործման անհրաժեշտությունը վերանալու դեպքում քննիչը զեկուցագիր է ներկայացնում ստորաբաժանման պետին, ով նշված զեկուցագիրը գրությամբ ներկայացնում է

համապատասխան իրավասու անձին և ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

17. Պահատեղիի անհրաժեշտությունը վերանալու դեպքում՝ դրա բանալին հանձնվում է Կոմիտեի առաջին բաժին: Բանկի հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետում բանալին պահվում է Կոմիտեի առաջին բաժնում և պահատեղիի հետագայում չօգտագործվելու դեպքում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո վերադարձվում է բանկին:

18. Մինչ բանկում տեղադրվելը և իրավասու անձին ներկայացնելը՝ քննիչի կողմից առարկաները տեղադրվում են մեկ միասնական փաթեթում (փաթեթներում)՝ դրա վրա նշելով ստորաբաժանման անվանումը, քրեական վարույթի համարը, միասնական փաթեթի համարը: Նշված գործընթացին մասնակցում է ստորաբաժանման պետը, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում են յուրաքանչյուր միասնական փաթեթում պահվող առարկաների ցանկը, իսկ արձանագրությունը կցվում է քրեական վարույթին: Նույն ընթացակարգով տեղի է ունենում նաև առարկաները միասնական փաթեթներից հանելու գործընթացը:

19. Իրավասու անձին միասնական փաթեթները հանձնելու, հետագայում դրանք ստանալու վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ նշելով քրեական վարույթի համարը, փաթեթի թիվը, անհրաժեշտության դեպքում նաև այլ տեղեկություններ: Արձանագրությունը ստորագրվում է իրավասու անձի, ստորաբաժանման պետի և քննիչի կողմից: Ստորաբաժանման պետը նշված արձանագրությունն ուղարկում է ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

20. Քննվող քրեական վարույթը նախաքննություն իրականացնելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում փոխանցվելու դեպքում.

1) Եթե տվյալ պահատեղիում առկա է միայն փոխանցվող քրեական վարույթին վերաբերելի առարկան, ապա սույն կարգով նախատեսված ընթացակարգով կազմակերպվում է բանալու փոխանցումը համապատասխան իրավասու անձին:

2) Եթե տվյալ պահատեղիում առկա են տարբեր քրեական վարույթների առարկաներ, ապա սույն կարգին համապատասխան ընթացակարգով փոխանցվող առարկան հանվում է պահատեղիից և քրեական վարույթի նյութերի հետ միասին ուղարկվում համապատասխան ստորաբաժանում:

21. Քրեական վարույթը քննչական ենթակայության կանոններին համապատասխան նախաքննության այլ մարմին փոխանցվելուց հետո հնարավոր սեղմ ժամկետում սույն կարգին համապատասխան ընթացակարգերով վարույթն իրականացնող քննիչի կողմից կազմակերպվում է նաև առարկաների փոխանցումը այլ քննչական մարմնին:

22. Մեղադրական եզրակացությունը կազմելուց և այն հսկող դատախազի հաստատմանը ներկայացնելուց հետո դատախազի կողմից դրա հաստատման և վարույթի նյութերը դատարան հանձնելու դեպքում հնարավոր սեղմ ժամկետում սույն

կարգին համապատասխան ընթացակարգով քննիչը միջոցներ է ձեռնարկում առարկան պահատեղիից հանելու և դատախազին հանձնելու ուղղությամբ՝ դատարան ուղարկելու նպատակով:

23. Սույն կարգով նախատեսված ընթացակարգերը պահպանելու օբյեկտիվ անհնարինության կամ համապատասխան կարգավորումների բացակայության իրավիճակներում գործընթացին ներգրավված անձինք անցկացնում են քննարկումներ՝ վերադասության կարգով համաձայնեցնելով անհրաժեշտ լուծումները:

Ձև 1

ՄԱՏՅԱՆ

ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՏՈՒՓԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ, ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼԻԱԶՈՐԱԳՐԵՐԻ, ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՏՈՒՓԻ ԲԱՆԱԼԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ

Վարույթի համարը	Պահատեղիի և պայմանագրի համարը	Իրավասու անձ Անուն Ազգանունը (Ստորագրություն, օր, ամիս, ամսաթիվ)	Կոմիտեի գլխավոր քարտուղարի ն ուղղված զեկուցագիր (օր, ամիս, տարեթիվ)	Կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից տրամադրված լիազորագիր օր, ամիս, տարեթիվ)	Բանալին ստանալու մասին «ստացա» նշում (Ստորա-գրություն, օր, ամիս, ամսաթիվ, ժամ)	Բանալին հանձնելու մասին «հանձնեցի» նշում (Ստորագրություն, օր, ամիս, ամսաթիվ, ժամ)

Ձև 2

ՄԱՏՅԱՆ
ԲԱՆԿՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՀԱՏԵՂԻՆԵՐԻ

Պահատեղիի համարը (այդ թվում՝ ազատ), չափը (փոքր, միջին, մեծ) թվահամարը	Ստորաբաժանման անվանումը	Վարույթի համարը	Իրեղեն ապացույցների թվարկում